

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 16.06.2021թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 39 (երեսունինը) անդամից՝ 32-ը
(երեսուներկուսը)

Նիստին մասնակցում էին՝

- | | |
|---|---------------------|
| 1. Գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի ԺՊ | Սերոբյան Երվանդ |
| 2. Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ | Ավետիսյան Նազելի |
| 3. ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ | Նիկողոսյան Գագիկ |
| 4. Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն | Մելքոնյան Հովիկ |
| 5. Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն | Սարգսյան Արմենուհի |
| 6. Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն | Խաչատրյան Թերեզա |
| 7. Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար) | Պետրոսյան Կարինե |
| 8. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ղեկան | Պողոսյան Բագրատ |
| 9. Մոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի ղեկան | Հովհաննիսյան Օֆելյա |
| 10. Մանկավարժության ֆակուլտետի ղեկան | Մարդոյան Ռուզաննա |
| 11. Ռազմական ամբիոնի պետ | Մկրտչյան Արթուր |

- | | |
|--|---------------------|
| 12. ՇՊՀ քուլեջի տնօրեն | Դավիդյան Աշոտ |
| 13. ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն | Դարբինյան Կարեն |
| 14. ՇՊՀ արհմիության նախագահ | Խաչատրյան Վալերի |
| 15. Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ | Մարտիրոսյան Լևոն |
| 16. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի գործարարության և վարչարարության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ | Մկրտչյան Արթուր |
| 17. Մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ | Ղուկասյան Լուսիկ |
| 18. Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ | Աղանյան Գևորգ |
| 19. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ | Հովհաննիսյան Արտակ |
| 20. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի հոգեբանության ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ., դոցենտ | Սահակյան Կարինե |
| 21. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր | Հովհաննիսյան Անահիտ |
| 22. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ | Տեր-Աղամյան Շուշան |
| 23. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ | Մաթևոսյան Էվելինա |

- | | |
|---|------------------------------|
| <p>24. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի</p> | <p>Համբարյան Ժենյա</p> |
| <p>25. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի</p> | <p>Հովհաննիսյան Յուլյանա</p> |
| <p>26. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի</p> | <p>Գալստյան Ամալյա</p> |
| <p>27. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի</p> | <p>Վիրաբյան Ալլա</p> |
| <p>28. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրակ. Մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի</p> | <p>Մուրադյան Վարդուհի</p> |
| <p>29. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրակ. Մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի</p> | <p>Աթոյան Շուշաննա</p> |
| <p>30. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող</p> | <p>Աթոյան Արսյոմ</p> |
| <p>31. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի սոցիոլոգիա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի</p> | <p>Հովհաննիսյան Հռիփսիմե</p> |
| <p>32. Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի</p> | <p>Սարգսյան Սվետլանա</p> |

ՕՐԱԿԱՐԳ

1. 2020-2021 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերլուծության մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

2. Բարելավման նպատակով բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման համակարգերի կրթական ծրագրերի ուսումնական պլաններում փոփոխություններ կատարելու մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

3. Մաթեմատիկայի, ֆիզիկայի և SS ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ գիտ. թեկն. Լ. Մարգարյանի հեղինակությամբ ներկայացված «SPSS համակարգչային փաթեթի որոշ կիրառություններ» ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին

Հաղ.՝ Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

4. ՇՊՀ-ի Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի «Պատմության և փիլիսոփայության» ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Ինգա Էդուարդի Ավագյանին «Հնագիտություն» մասնագիտությամբ /Է.00.003/ դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Գիտական խորհրդի նախագահ Ե. Սերոբյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32 անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Օրակարգը հաստատվեց:

1. ԼՍԵՑԻՆ՝

2020-2021 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերլուծության մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ ամեն տարի այս հարցի հետ կապված նախարարություն է ուղարկվում հաշվետվություն 4-րդ ձևը, այնուհետև թվերով ներկայացրեց 2020-21 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքները:

2020-2021 ուստարվա ամփոփիչ ատեստավորման քննություններ են հանձնել 677 ուսանողներ, որոնցից քննությունները հաղթահարել են 673-ը, 4 ուսանողներ չեն հաղթահարել քննությունները, կտրվել են, որոնք ՆԶՊ-ի հեռակա բաժնի ուսանողներ են, այնուհետև շարունակեց, որ իրենց կողմից լսվել են քննությունների բոլոր ձայնագրությունները, ամփոփիչ ատեստավորման նախագահների կարծիքները և բոլոր փաստերը համադրելով, ներկայացնում է, որ գերազանցության դիպլոմ ստացած ուսանողների թիվը բակալավրի կրթական ծրագրով սովորողների մոտ կազմել է 78, իսկ մագիստրատուրայում՝ 112 ուսանողներ:

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ ամփոփիչ ատեստավորման քննությունների նախագահների կարծիքները քննարկվել են ֆակուլտետային ընդլայնված նիստերում և հիմնական խնդիրներից մի քանիսը նշեց, դրանցից առաջինը վերաբերվում է նրան, որ ամփոփիչ ատեստավորման աշխատանքներում դիտողություն է արված տեսական և կիրառական բաղադրիչների ոչ համաչափ բաշխման վերաբերյալ, այսինքն տեսությանն ավելի մեծ մաս է հատկացվում, քան կիրառական բաղադրիչին: Մագիստրոսական թեզերի առումով դիտողությունը վերաբերվում է հետազոտական բաղադրիչի սակավությանը աշխատանքներում:

Տիկին Ավետիսյանը նշեց, որ հարցը քննարկվել է նաև ամբիոնի վարիչների հետ, նրանց հանձնարարվել է այս ուղղությամբ աշխատել և առաջարկություններ ներկայացնել ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոն՝ նախորոք համագործակցելով ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարների հետ:

Այնուհետև տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ դասավանդման մեթոդիկաների հետ կապված առարկաների ժամաքանակը 138 ժամ է, մինչդեռ դասավանդման մեթոդիկաների հետ կապված ավարտական աշխատանքները ընդամենը 5 տոկոս են կազմում: Նա նշեց, որ պետք է հստակ պատկերացնել մանկավարժական առարկաների վերջնարդյունքները, հատկապես, որ տվյալ մասնագիտացմամբ ուսանողը ստանում է մանկավարժության բակալավրի որակավորում:

Տիկին Ավետիսյանը նշեց նաև, որ ֆակուլտետների կողմից ընթացակարգի փոփոխությունների առաջարկներ են եղել և ամբիոնի վարիչներին իրենց կենտրոնի կողմից հանձնարարականներ են տրվել ընթացակարգերի նվերաբերյալ առաջարկություններ ներկայացնել, որպեսզի փոփոխություններ մտցնեն ընթացակարգում: Տիկին Ավետիսյանը նշեց նաև, որ նախագահների կողմից դրվատանքի խոսքեր են հնչել և բարձր գնահատականի են արժանացել շատ ավարտական և մագիստրոսական աշխատանքներ, հատկապես նրանց կողմից գոհունակություն է արտահայտվել հատուկ մանկավարժություն և լոգոպեդիա մասնագիտությանը առնչվող աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ա. Սարգսյանը, ով ասաց, որ խրախուսելի է տիկին Ավետիսյանի կողմից կատարած առաջարկն ու դրա ընդունումը գիտական խորհրդի կողմից, այնուհետև հարց ուղղեց տիկին Ավետիսյանին: Նրան հետաքրքրում էր, թե մանկավարժության որոկավորմամբ մասնագիտությունների պարագայում ունեն թեմաների հետ կապված վիճակագրական տվյալներ, օրինակ ի՞նչ սկզբունքով են հանվել դրանք և դա վերաբերվում է դասավանդման մեթոդիկային, թե՞ օրինակ ասենք մաքուր մաթեմատիկային: Ա. Սարգսյանը նշեց, թե ինչու է սա շեշտում, իր կարծիքով թեման կարող է չպարունակի դասավանդման մեթոդիկայի շեշտադրումներ, սակայն աշխատանքում կիրառվեն որոշակի մեթոդներ:

Տիկին Ավետիսյանը պատասխանեց, որ իր կողմից առաջարկվել է այս ուղղությամբ համապատասխան ընթացակարգում փոփոխություններ կատարել և մանկավարժի որակավորում շնորհվող մասնագիտությունների համար պարտադիր կերպով ընթացակարգային 1 կետ ավելացնել, պարտադիր բաղադրիչ՝ դասավանդման մեթոդիկային վերաբերվող կամ ինչ-որ մի հատված, որի բովանդակությունը միանշանակ լինի դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ, ապա նշեց, որ դրա ծավալի և մյուս դրսևորումների մասին լայն քննարկման արդյունքում կորոշվեն:

Այնուհետև տիկին Ավետիսյանը շարունակեց, որ ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչ սկզբունքով է առանձնացվել մագիստրոսական աշխատանքներից դասավանդման մեթոդիկան գուտ մասնագիտական մասից, ապա բոլոր թեմաները դիտարկվել են բացառապես տեխնիկական առումով՝ իրենց մեջ դասավանդման մեթոդիկայի տարրը պարունակելու առումով: Տիկին Ավետիսյանը նշեց նաև, որ իրենց կենտրոնի գործառույթը տվյալ հարցի առումով խորհրդատվական է և ներկայացված դիտարկումները նախագահների կարծիքների հիման վրա իրենց կատարած վերլուծություններն են:

Հաղորդման վերջին հատվածում Տիկին Ավետիսյանը դեկաններին շնորհակալություն հայտնեց՝ համաճարակայի միջոցառումները պատշաճ պահպանելով, ամփոփիչ ատեստավորման գործընթացը բարձր մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար:

Պարոն Սերոբյանը կատարեց մի շարք դիտարկումներ գերազանցության դիպլոմների հետ կապված: Նրա կարծիքով պետք է կարևորել կարմիր դիպլոմի արժեքը, եթե մագիստրոսների 60 տոկոսն այսօր գերազանցության դիպլոմներ են ստանում, ապա գնահատման համակարգում ինքը խնդիր է տեսնում:

Է. Մաթևոսյանը, ով համաձայն չէր պարոն Սերոբյանի վերջին մտքի հետ, նրա կարծիքով, մագիստրատուրայի ուսանողները բակալավրատի լավ սովորողներն են հիմնականում և օրինաչափ է, որ 60 տոկոս գերազանցության դիպլոմ ստացող շրջանավարտ մագիստրոսներ ունեն:

Տիկին Ավետիսյանը հույս հայտնեց, որ քննարկման արդյունքում ակնկալում են գնահատման համակարգում նոր դիտարկումներ ու լրացումներ ստանալ բուհի համապատասխան ստորաբաժանումներից:

Տիկին Ավետիսյանը արդյունքների վերլուծության ավարտին հանդես եկավ առաջարկով և խնդրեց այն քվեարկության դնել գիտական խորհրդի նիստում, այն է.

Հատուկ մասնագիտական դասընթացների հրավիրյալ դասախոսների պարապմունքները կազմակերպել առցանց տարբերակով՝ ըստ անհրաժեշտության, և ուսումնական տարվա մեկնարկին նախապես ներկայացնել հայտեր ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոն:

Տիկին Ավետիսյանի կարծիքով իր կատարած առաջարկը միտված է նաև ՄԿԾ-ների բարելավմանը և պրոֆեսորադասախոսական համակազմի նկատմամբ քաղաքականության մի մասնիկ է:

Պարոն Սերոբյանը տիկին Ավետիսյանի առաջարկությունը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32 անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 2020-2021 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքներն ամփոփելով՝ ի գիտություն ընդունել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կողմից ներկայացված դիտարկումներն ու առաջարկությունները:

2. Բարելավել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ընթացակարգը:

3. Թույլ տալ հատուկ մասնագիտական դասընթացները վարող հրավիրյալ դասախոսների պարապմունքները կազմակերպել նաև առցանց անհրաժեշտությունից ելնելով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32 անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

Բարելավման նպատակով բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման համակարգերի կրթական ծրագրերի ուսումնական պլաններում փոփոխություններ կատարելու մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ 2021-2022 ուսումնական տարվա ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունները հիմնավորված ներկայացվել են համապատասխան մասնագիտական ամբիոնների կողմից՝ ամբիոնի վարիչների կողմից իրենց կենտրոն ներկայացված ամբիոնի նիստերի արձանագրությունների քաղվածքների և զեկուցագրերի հիմնավորումներով:

Տիկին Ավետիսյանի կողմից ներկայացվեցին հետևյալ փոփոխությունները.

2021-2022 ուսումնական տարվա ուսումնական պլաններում կատարվելու են բարեփոխումներ՝ հետևյալ մասնագիտական կրթական ծրագրերում.

«Մոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ուսումնական պլանի (հաստատված 02.09.2019թ.) 2-րդ

կուրսի 1-ին կիսամյակում «Սոցիոլոգիա» դասընթացը փոխարինել «Խմբերի սոցիոլոգիա» դասընթացով՝ նույն կրեդիտով և կրեդիտ-ժամ ծանրաբեռնվածությամբ՝ 6 կրեդիտ, 180 կրեդիտ-ժամ:

«Աշխարհագրություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ուսումնական պլանում 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում «Ընդհանուր գեոմորֆոլոգիա» առարկայի փոխարեն ներդնել «Ռազմական աշխարհագրություն» առարկան՝ պահպանելով կրեդիտը և շաբաթական ծանրաբեռնվածությունը՝ 6 կրեդիտ, 180 կրեդիտ-ժամ՝ 4 ժամ շաբաթական ծանրաբեռնվածությամբ:

«Աշխարհագրություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ուսումնական պլանում 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակում «Լանդշաֆտագիտություն» առարկայի փոխարեն ներդնել «GIS/Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր» առարկան՝ 6 կրեդիտ, 180 կրեդիտ-ժամ՝ 5 ժամ շաբաթական ծանրաբեռնվածությամբ: 80 ժամ ընդհանուր լսարանային ծանրաբեռնվածությունից 40 ժամը դասախոսություն, 20-ը՝ գործնական, 20-ը՝ սեմինար, 18-ը՝ ուսումնական պրակտիկա: Նույն կիսամյակում «Կենսաաշխարհագրություն» առարկայի ընդհանուր լսարանային ծանրաբեռնվածությունը 80 ժամի փոխարեն դարձնել 64 ժամ, 40 ժամ դասախոսությունը՝ 34, 20 գործնական ժամը՝ 6, 20 ժամ սեմինարը՝ 24, 18 ժամ ուսումնական պրակտիկան՝ 12, շաբաթական ծանրաբեռնվածության 5 ժամը 4՝ պահպանելով կիսամյակի կրեդիտների և շաբաթական ծանրաբեռնվածության գումարային քանակը:

«Աշխարհագրություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ուսումնական պլանում 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում «Ընդհանուր գեոմորֆոլոգիա» առարկայի փոխարեն ներդնել «Ռազմական աշխարհագրություն» առարկան՝ պահպանելով կրեդիտը և շաբաթական ծանրաբեռնվածությունը՝ 6 կրեդիտ, 180 կրեդիտ-ժամ՝ 5 ժամ շաբաթական ծանրաբեռնվածությամբ:

«Աշխարհագրություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ուսումնական պլանում 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակում «Լանդշաֆտագիտություն» առարկայի փոխարեն ներդնել «GIS/Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր» առարկան՝ 6 կրեդիտ, 180 կրեդիտ-ժամ՝ 5 ժամ շաբաթական ծանրաբեռնվածությամբ, ընդհանուր լսարանային ծանրաբեռնվածությունը 20 ժամ, որից 10-ը՝ դասախոսություն, 4-ը՝ գործնական, 6 ժամը՝ սեմինար, 4 ժամը՝ ուսումնական պրակտիկա: Նույն կիսամյակում, «Կենսաաշխարհագրություն» առարկայի ընդհանուր լսարանային ծանրաբեռնվածության 20 ժամը դարձնել 16, 10 ժամ դասախոսությունը՝ 8, գործնական ժամերը՝ 4, 6 ժամ սեմինարը դարձնել 4, ուսումնական պրակտիկան՝ 4

ժամ, շաբաթական ծանրաբեռնվածության 5 ժամը դարձնել 4՝ պահպանելով կիսամյակի գումարային կրեդիտները և շաբաթական ծանրաբեռնվածությունը:

«Նախնական զինվորական պատրաստություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ուսումնական պլանի 4-րդ կուրսի 1-ին կիսամյակում միայն 2021-2022 ուսումնական տարվա համար որպես անցումային ուսումնական պլան՝ «Զինվորական առաջնություն» առարկայի գրավոր ամփոփիչ ստուգումը դարձնել բանավոր, «Քաղաքացիական պաշտպանություն և անվտանգ կենսագործունեություն» առարկայի 22 ժամ դասախոսությունը դարձնել 24 ժամ, 12 ժամ սեմինարը՝ 10, գործնական ժամերը թողնել նույնը՝ պահպանելով առարկայի կրեդիտը, ամփոփիչ ստուգման ձևը, լսարանային և շաբաթական ծանրաբեռնվածությունը:

«Նախնական զինվորական պատրաստություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ուսումնական պլանի 4-րդ կուրսի 2-րդ կիսամյակում միայն 2021-2022 ուսումնական տարվա համար որպես անցումային ուսումնական պլան՝ առարկայի շարունակականությունը ապահովելու և տվյալ առարկայից ամփոփիչ ատեստավորման քննություն հանձնելու պատճառով ավելացնել «ՆԶՊ դասավանդման մեթոդիկա» առարկան՝ ամփոփիչ բանավոր ստուգմամբ, 4 կրեդիտ, 120 կրեդիտ-ժամով, 40 ժամ ընդհանուր լսարանային ծանրաբեռնվածությամբ, որից 20 ժամը դասախոսություն, 12 ժամը գործնական, 8-ը՝ սեմինար, շաբաթական 4 ժամ ծանրաբեռնվածությամբ՝ պահպանելով կիսամյակի գումարային կրեդիտները և շաբաթական ծանրաբեռնվածությունը: «Ռազմաիրավական պատրաստություն» առարկայի գրավոր ամփոփիչ ստուգումը դարձնել բանավոր, ընդհանուր լսարանային ծանրաբեռնվածությունը դարձնել 40 ժամ՝ 50-ի փոխարեն, 26 ժամ դասախոսությունը՝ 20, 12 ժամ գործնականը՝ 10, 12 ժամ սեմինարը՝ 10 ժամ, 5 ժամ շաբաթական ծանրաբեռնվածության փոխարեն՝ 4, 6 կրեդիտ, 180 կրեդիտ-ժամով՝ պահպանելով կիսամյակի գումարային կրեդիտները և շաբաթական ծանրաբեռնվածությունը: «Ռազմարվեստի պատմություն» առարկայի ընդհանուր լսարանային ծանրաբեռնվածության 60 ժամից նույն 30 ժամ դասախոսությամբ, 14 գործնական ժամը դարձնել 16, 16 ժամ սեմինարը՝ 14, պետական քննություն/ավարտական աշխատանքի 12 կրեդիտը դարձնել 8՝ պահպանելով կիսամյակի գումարային կրեդիտները և շաբաթական ծանրաբեռնվածությունը:

«Նախնական զինվորական պատրաստություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ուսումնական պլանի 5-րդ կուրսի 1-ին կիսամյակում միայն 2021-2022 ուսումնական տարվա համար որպես անցումային ուսումնական պլան ավելացնել «Ռազմարվեստի պատմություն» առարկան՝ ամփոփիչ բանավոր ստուգմամբ և անհատական/ստուգողական աշխատանքով, 5 կրեդիտ, 150 կրեդիտ-ժամով, 24 ժամ լսարանային

ծանրաբեռնվածությամբ, որից 16 ժամը դասախոսություն, 8-ը գործնական՝ պահպանելով կիսամյակի գումարային կրեդիտները և շաբաթական ծանրաբեռնվածությունը: Նույն կիսամյակում «Քաղաքացիական պաշտպանություն և անվտանգ կենսագործունեություն» առարկայի 6 կրեդիտ, 180 կրեդիտ-ժամը փոխարինել 4 կրեդիտ, 120 կրեդիտ-ժամով, 24 ժամ ընդհանուր լսարանային ծանրաբեռնվածությունը դարձնել 16 ժամ, որից 14 ժամ դասախոսությունը դարձնել 10 ժամ, գործնական ժամերը թողնել նույնը՝ 6, սեմինարի 4 ժամը հանել, շաբաթական ծանրաբեռնվածությունը 6 ժամից դարձնել 4: «ՆԶՊ դասավանդման մեթոդիկա» առարկայի կրեդիտները 6 կրեդիտ, 180 կրեդիտ-ժամի փոխարեն դարձնել 3 կրեդիտ, 90 կրեդիտ-ժամ, 24 լսարանային ժամը դարձնել 16,4 ժամ դասախոսությունը՝ 12, 20 ժամ գործնականը 4՝ պահպանելով նույն ամփոփիչ ստուգման ձևը, կիսամյակի գումարային կրեդիտները և շաբաթական ծանրաբեռնվածությունը:

«Նախնական զինվորական պատրաստություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ուսումնական պլանի 5-րդ կուրսի 2-րդ կիսամյակում միայն 2021-2022 ուսումնական տարվա համար որպես անցումային ուսումնական պլան առարկայի շարունակականությունը ապահովելու և տվյալ առարկայից ամփոփիչ ատեստավորման քննություն հանձնելու պատճառով ավելացնել «ՆԶՊ դասավանդման մեթոդիկա» առարկան՝ ամփոփիչ բանավոր ստուգմամբ և անհատական/ստուգողական աշխատանքով, 4 կրեդիտ, 120 կրեդիտ-ժամով, 16 ժամ ընդհանուր լսարանային ծանրաբեռնվածությամբ, որից 12 ժամը դասախոսություն, 4-ը գործնական՝ շաբաթական 4 ժամ ծանրաբեռնվածությամբ:

«Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմունքներ» առարկայի ընդհանուր լսարանային ծանրաբեռնվածության 16 ժամից 4 ժամ սեմինարը դարձնել 4 ժամ գործնական, մյուս ժամերը թողնել նույնը, պահպանելով նույն ամփոփիչ ստուգման ձևը և կրեդիտը: «Ռազմասիրական պատրաստություն» առարկայի ամփոփիչ գրավոր ստուգման ձևը դարձնել բանավոր, 6 կրեդիտ, 180 կրեդիտ-ժամը դարձնել 4 կրեդիտ, 120 կրեդիտ-ժամ, 16 լսարանային ծանրաբեռնվածությունից 10 ժամ դասախոսությունը դարձնել 12 ժամ, գործնական ժամերը թողնել նույնը՝ 4, սեմինարի 2 ժամը հանել՝ շաբաթական ծանրաբեռնվածությունը՝ 4 ժամ: «Քաղաքացիական պաշտպանություն և անվտանգ կենսագործունեություն» առարկայի ամփոփիչ գրավոր ստուգման ձևը դարձնել բանավոր, 2 կրեդիտ, 60 կրեդիտ-ժամը դարձնել 4 կրեդիտ, 120 կրեդիտ-ժամ, ընդհանուր լսարանային ծանրաբեռնվածության 16 ժամից 12-ը՝ դասախոսություն, 2 գործնական ժամը՝ 4, սեմինարի 2 ժամը հանելով, և պահպանելով շաբաթական ծանրաբեռնվածությունը: Պետական քննություն/ավարտական աշխատանքի 12 կրեդիտը դարձնել 8՝ պահպանելով կիսամյակի գումարային կրեդիտները և շաբաթական ծանրաբեռնվածությունը:

2021-2022 ուսումնական տարվանից բակալավրի կրթական ծրագրերով առկա ուսուցման ուսումնական պլաններում «**Հասարակագիտություն**» (3 կրեդիտ, 90 կրեդիտ/ժամ) դասընթացի շրջանակներում «**Իրավագիտություն**» բաղադրիչի 16 ժամին ավելացնել ևս 10 ժամ՝ դարձնելով 26 ժամ՝ հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքների թեմաները ներառելու համար:

2021-2022 ուսումնական տարվանից բակալավրի կրթական ծրագրերով հեռակա ուսուցման ուսումնական պլաններում «**Հասարակագիտություն**» (3 կրեդիտ, 90 կրեդիտ/ժամ) դասընթացի շրջանակներում «**Իրավագիտություն**» բաղադրիչի 4 ժամին ավելացնել ևս 2 ժամ՝ դարձնելով 6 ժամ՝ հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքների թեմաները ներառելու համար:

053101.02.6 - «Դեղագործական քիմիա» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսումնական պլաններում 2021-2022 ուսումնական տարվանից ժամանակակից պահանջներից ելնելով ներդնել «**Մաշկաբանություն**» և «**Կոսմետոլոգիա**» առարկաները, որի պատճառով տարբեր կիսամյակներում տեղի են ունեցել որոշ մոդուլների կրեդիտների և ընդհանուր լսարանային ծանրաբեռնվածության ժամաքանակների փոփոխություններ՝ պահպանելով կիսամյակների գումարային կրեդիտները և մասնակիորեն՝ շաբաթական ծանրաբեռնվածությունը::

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման համակարգերի կրթական ծրագրերերի ուսումնական պլաններում իրականացված բարելավմանն ուղղված փոփոխությունները:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32 անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և SS ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ գիտ. թեկն. Լ. Մարգարյանի հեղինակությամբ ներկայացված «**SPSS համակարգչային փաթեթի որոշ կիրառություններ**» ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հիմք ընդունելով արտաքին գրախոսման դրական կարծիքները՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի և SS-ի ամբիոնի դոցենտ Լիլիթ Մարգարյանի կողմից ներկայացված «**SPSS**

համակարգչային փաթեթի որոշ կիրառություններ» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32 անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի «Պատմության և փիլիսոփայության» ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Ինգա Էդուարդի Ավագյանին «Հնագիտություն» մասնագիտությամբ /Է.00.003/ դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին

Ա. Սարգսյանը ներկայացրեց դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդին: Պարոն Սերոբյանը առաջարկ ստացավ հարցը դնել փակ գաղտնի քվեարկության:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32 անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Դոցենտի գիտական կոչման հավակնորդ՝

№	Անուն, հայրանուն, ազգանուն	Ամբիոն, ձևայնացված կարգավիճակ	Գիտության բնագավառ, մասնագիտություն, թվանիշ
1	Ինգա Ավագյան	«Պատմության և փիլիսոփայության ամբիոն»-- դասախոս	Է.00.03– «Հնագիտություն»

Գիտական կոչում շնորհելու մասին որոշում կայացնելու համար անցկացված փակ գաղտնի քվեարկություն կազմակերպելու համար ընտրվեց 3 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Հովիկ Մելքոնյան (նախագահ), Գևորգ Աղանյան և ուսանողներից՝ Ամալյա Գալստյան: Քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Հ. Մելքոնյանը ներկայացրեց հետևյալ արդյունքները.

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Ինգա Ավագյան	27	4	1

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաշվի առնելով, որ Ինգա Էդուարդի Ավագյանի ներկայացրած գործը լիովին համապատասխանում է ՀՀ կառավարության 09.07.2001թ. հ. 615 որոշմամբ

հաստատված ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի՝ դոցենտի գիտական կոչման համար սահմանված պահանջներին (5բ), ՇՊՀ գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա (քվեարկել են 32-ը. կողմ՝ 27, դեմ՝ 4, անվավեր՝ 1) Ինգա Էդուարդի Ավագյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝ Է.00.03– «Հնագիտություն» մասնագիտությամբ և միջնորդել ՀՀ ԲՈԿ՝ հաստատելու այդ որոշումը և ամրագրելու համապատասխան դիպլոմով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32 անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ
Գիտական խորհրդի
քարտուղար



Ե. ՍԵՐՈԲՅԱՆ
Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ